ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Արգամ Արամյանի՝ 2023թ. նոյեմբերի 6-ից 10-ը գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արգամ Արամյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2023 թվականի նոյեմբերի 6-ից 10-ը

3. Հրավիրող կողմը՝

Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ (ԿԶԵՀ)

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ ԿԶԵՀ հարցերով աշխատանքների համակարգման մեջ ներգրավված ներկայացուցիչների համար կազմակերպված իրազեկման միջոցառմանը

5. Քննարկված թեմաները՝

Աշխատանքային խմբի հանդիպումներին ԿԶԵՀ անդամ երկրների (Հայաստանի Հանրապետություն և Ղրղզստանի Հանրապետություն) ներկայացուցիչներին են ներկայացվել Հիմնադրամի Եվրասիական զարգացման բանկից առանձնացման գործընթացը, դրա իրավական նախադրյալներն ու ընթացիկ իրավիճակը (Հիմնադրամի ինքնուրույն միջազգային ֆինանսական կազմակերպության կարգավիճակի հասնելուն միտված պրոցեսները): Առանձին քննարկման առարկա են եղել Հիմնադրամի տրանսֆորմացման արդյունքում ձևավորվելիք ապագա կառույցի

հիմնական քաղաքականություններին վերաբերող փաստաթղթերը (Ստանդարտ պայմաններ և այլ կարգավորումներ):

Մասնակիցներին հնարավորություն է ընձեռվել համակողմանիորեն և խորությամբ ծանոթանալ Հիմնադրամի գործունեության այնպիսի գործընթացներին, ինչպիսիք են ԿԶԵՀ կողմից իրականացվող տարբեր նախագծերի (բյուջետային աջակցության, ներդրումային և դրամաշնորհային ծրագրեր) համաձայնագրերի կազմման, մոնիտորինգի և գնահատման հիմնական մոտեցումների, գնումների քաղաքականության, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատականների, միջոցների տրամադրման ընթացակարգերի հետ առնչվող աշխատանքները:

Հիմնադրամի գործընկերները մանրամասն ներկայացրել են ԿԶԵՀ կենսագործունեության ընթացքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ծրագրերին առնչվող համաձայնագրերի վերաբերյալ նախնական հայտի ստացումից մինչև հայտի եզրակացության կազմման բոլոր ընթացակարգային և բովանդակային մանրամասներին՝ ներառյալ համաձայնագրերի նախագծերի բաղադրիչների նկարագրությունը: Այդ համատեքստում առաջնային է համարվել 2022-2026թթ. ԿԶԵՀ ռազմավարությունից բխող մակրոտնտեսական կայունության ամրապնդմանն ուղղված Հիմնադրամի տեսլականը, ինչպես նաև մակրոտնտեսական մոնիթորինգի նոր համակարգի (ՄՄՀ) ներդրման անհրաժեշտությունը, որը ֆորմալ գործընթաց է և ներառում է մակրոտնտեսական տեղեկատվության համակարգված հավաքագրում և վերլուծություն, մասնակից պետությունների հետ պարբերական երկկողմ խորհրդակցությունների անցկացում անդամ երկրների մակրոտնտեսական իրավիճակի և տնտեսական քաղաքականության հարցերի շուրջ, ինչպես նաև մակրոտնտեսական ու ֆինանսական կայունության համալիր ախտորոշում:

Մանրամասն քննարկումներ են ծավալվել նաև այլ հարցերի շուրջ. առանձնապես կարևորվել են ֆինանսական հաշվետվությունների ձևերին, ծրագրերի շրջանակներում միջոցների տրամադրման մեթոդներին, կարգին, միջոցների

օգտագործման նկատմամբ վերահսկողությանը, չօգտագործված միջոցների վերադարձին, աուդիտի անցկացմանն առնչվող հարցերը, որոնք աշխատանքային պրոցեսի անբաժանելի մասն են կազմում:

Մասնակիցները նաև իրազեկվել են Հիմնադրամի կադրային քաղաքականությանն ու ապագա տեսլականին, մասնավորապես նաև նոր կադրերի ներգրավման, նրանց ինտեգրման գործընթացներին առնչվող մանրամասների վերաբերյալ:

Միաժամանակ քննարկումների ընթացքում աշխատանքային խմբի անդամները ներկայացրել են վերը նշված հարցերի շուրջ իրենց երկրներում առկա փորձը, վարվող քաղաքականություններն ու մտքեր փոխանակել Հիմնադրամի՝ միջազգային ֆինանսական կառույցի տրանսֆորմացման գործընթացի շուրջ:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատանքային խմբի հանդիպմանը նշվել է նմանատիպ հանդիպումների անցկացման կարևորության մասին և պայմանավորվածություն է ձեռք բերվել անդամ պետությունների համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների համար նման միջոցառումների կազմակերպման շարունակականության վերաբերյալ:

Ստորագրությունը՝

14.11.2023թ.